ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 01

19 հունվարի 2014թ-ին կնքված N ՀՀՍՆ-02/15 գնման պայմանագրի

ք.Երևան « 08 » օգոստոսի 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Հ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետը և ՀՀ Կառավարության 2019 թվականի հուլիսի 4-ի թիվ 832-Ն որոշումը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին ՀՀ սփյուռքի նախարարության և «Յուքոմ» ՍՊԸ-ի միջև կնքված N ՀՀՍՆ-02/15 գնման պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունն, ի դեմ աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի» բառերը փոխարինել «Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ. Պապիկյանի» բառերով:

1.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և տարածվում 2019 թվականի հունիսի 11-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է սույն համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Յուքոմ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Տերյան19, բն.4
Կառավարական տուն 1	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 217001264993001
Հ/Հ 900011018604	ՀՎՀՀ 00024873
ՀՎՀՀ 02505554	
/ ստորագրություն /	/ ստորագրություն /
Կ.Տ	Կ.Տ